

ԾԱԶԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՃԱԲԱԹԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Ա. Շրջան, Թիւ 33

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Սարգն ու շերամը	ԱղեթՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
Ծաղիկի համար (պատկերով)	Մ. Պ
Նայթինկէյի պատմութիւնը (անգլիերէնէ)	Յ. ԱԶԱՏԵԱՆ
Հին կրօնական	ՀԵՐԱՆՈՅ ՍՐՇԱԿԵԱՆ
Ժողովրդական հանելուկներ	Հ. ԹԻԻՅԷՆԿՃԵԱՆ
Հօր մը ժառանգը (առաքական պատմ.)	Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ
Ծերունին եւ երիտասարդը (թրգմ.)	Ե. ԿԻՒՐՃԵԱՆ
«Լանթերն»-ին ծագումը	
Ծոյլ եւ աշխատանքի տեղը	

Հանելուկ, Հաշուական հարցում, Ելն.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՑ ԵՒ ԴԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՄԱՐ
Տարեկան 30 դրուշ: Վեցամսեայ բաժնեգին չկայ:
ՍՐՏԱՍՍ.ԶՄԱՆԻ ԶԱՄԱՐ Տարեկան 7 ֆրանք:
ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ
Բաժնեգրինները կարելի է գրկել Օսմ. մանտաբօսթով, փոխ" գրով,
եւ կամ գրուշմաթուղթով (20 հատը 20 դրուշի հաշուով):
Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող
ամէն կարգի գործառնութեանց համար գիմել մի' միայն՝

ԲԱԿԱԵԱՆԻ

{زاغيك غزته سي} درعليه ده غلطه ده قورشوالی خاتمه نومرو ۷

«ԾԱԶԻԿ» ՀԱՆԴԻՍ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրշուշու խան, Թիւ 7

REVUE "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N° 7.

Գին 20 փարա

Տպագրութիւն ՍԱԳԱԵԱՆ, Կալաթա



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարեալ չլլալ՝ առանց գոյնի, մաքրութեան, Բոլոր այն տիկիւնները որոնք հոգը ունին այս թանկ կագին ձիրքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն աժանագին արտադրութիւններուն ուրոնք շունդալից ու լաւամիտով ծախու կը հանուին Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներելի կ'ընէ այդքան աժան ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օդին մէջ կ'չորնան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծթոյն և քիչ ատենէն առաջ կ'ըրեն անդարմանելի կարմրութիւններ և խորշումներ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի Կլիւսէրով բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր:

1900ի տիեզերական Արուեստահանդէսին մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն աղնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կ'խոստովանին թէ հակառակ ամոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիւնին և յաւէտ երիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր դրացուհիները պիտի պառաւանս՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ:

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական,
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ
համար 80) դրշ., Յամսեայ 45) դրշ., դատուներու համար 108) դրշ.
Յամսեայ 60) դրշ. եւ օտար երկիրներու համար 35) ֆր. Յամսեայ 20) ֆր.:
Ձեռքէ վաճառում՝ ճաշք փառաւ: Խնամեալ բովանդակութիւն, ըն-
տիր յօդուածներ, թարմ լուրեր ու նորագոյն տեղեկութիւններ:
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ եւ իր կարող աշ-
խատակիցներով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ
մամուլին մէջ, օր աւուր աւելի՝ հրապուրիչ դառնալով՝ նորանոր
բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Նիւ-
թերու ճոխ պէտքերով թիւն մը կը կազմեն իր մասնագիտական
յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեզանա-
ւորական, երկրագործական եւայլն, բաց ի գրական ու բանասի-
րական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ: ԱՐԵՒԵԼՔի վե-
րաբերեալ ամէն գրութիւն եւ բաժանորդագրին պէտք է ուղղել
Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Դալաթիա,
Մահմուտիյէ Ճաատէսի ուր կը գտնուին թերթին տպարանն ու
խմբագրատունը:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցա-
նէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զգոնութեանց եւ
տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

Հայրապիջ ԿՍՅՍ. ՊՍԼԱՏՍՆ The Singer Manufacturing Co.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարեալ-
գործուածը, հաստատունը եւ գիւրագործածելին ըլլալուն՝ բո-
վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն

մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան
վաճառատանց մէջ՝

- | | |
|---------|---|
| ՌԵՐՍ. | { 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | { 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍԼԱՏՍ. | { 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | { 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | { 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | { 2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. |
| ՍԿԻՏՍՐ | 2արլը Պօյու, Թ. 120. |

ՇԱԲԱԲԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՄԱՆՁՈՒՄԷ

Պատկերազարդ Օրաթերթ առաւօտեան: Բազաքական, գրական, գիտական, աղբային և տնտեսական: Տարեկան բաժնեգլինն է Պոլսոյ համար 80, գաւառաց համար 108, իսկ վեցամսեայ Պոլսոյ համար 50 և գաւառաց համար 60 զրուշ: Զեռքէ՝ հատը 10 փարա: Մանգումէ ամէնէն փողովրդական օրաթերթն է Պոլսոյ, իր հաճելի և պէսպիսութեամբ լեցուն բովանդակութեան համար: Բացի ամենօրեայ խմբագրական, եկեղեցական, գրական, տնտեսական և այլ յօդուածներէ, քաղաքական, աղբային և ներքին ճոխ լուրերէ, չորեքշաբթի և չաբաթ օրերը կը հրատարակուի տուեալական և գրական յաւելուածական էջերով:



ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1805

Կ. Պոլիս, Մերձան Փողոց թիւ 57

Մարգարեան գրատան ցուցակը չը տեսած, դասագիրքերու ընտրութիւն մի' ընէք, հարցուցէք ղեղչը և պատասխան կառնէք: Դրավաճառներու սպառած է խօսքին մի' հաւատար:

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿԸ միայն մամուլ տակ է, միւս դասագիրքերն ամէնքն ալ պատրաստ են:

Թղթատարի ծախքը մեր վրայ, ուղուած գիրքերն իրենց բուն գինով կը ղրկուին ուղղդին:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՈՐՆ Է

Տղաքներու և զպրոցականներու համար ամէնէն աղէկ գրատունը.

— Զամանադար Մեծ Նոր խանին տակ, ՅՈՒՀԱՆՆԵՍ ԴԵԼԸՃՃԱՆԻ Կեդրոնական Նոր Իրատունը.

10—50

ՇԱՂԻԿ

ՏԵՐԷՆ ՍՍԴԱՆՆ

Խմբագիր Եակոբ Տէր. Եակոբեան

(704) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 33

27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907



ՍԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Սարդը՝ Շերամին կ'ըսէր հեզնօրէն.
«Ի՛նչ դանդաղաչարժ ես դու, Աստուած իմ,
«Եւ որքա՛ն օրեր քեզ հարկաւոր են
«Որ գործ մ'արտադրես: Նայէ՛, չը պարծիմ,
«Փոքրիկ պահ մ'ինչ բաւ է՝ նուրբ անհամար
«Թելերով ոստայն հիւսելու համար»:

Շերամն յարեց. «Լա՛ւ սակայն,
«Դիմացկուն չէ քու ոստայն,
«Ոչ ալ, որ և է բանի
«Օգտակար կամ պիտանի.
«Ի՛նչ կ'արտադրեմ ես, իրա՛ւ,
«Բայց արտադրածս է միշտ լաւ»:

ԼԵՅՊԱՅԵՒ

ԱՂԵԲՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՖԼՕՐԵՆՍ ՆԱՅԹԻՆԿԵՅԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ԱՆԳԼԻՅԵՐԷՆԻ)

ՖԼՕՐԵՆՍ Նայթինկէյլ շատ փոքր աղջիկ մըն էր ու Տէրպի-
չարի գիւղերէն մէկուն մէջ կը բնակէր։ Ամէն մարդ գիտէր
թէ ո՛րքան բարեսիրտ էր մարդոց ու կենդանիներուն համար։ Ա-
մէն մարդ ու ամէն կենդանի զայն կը սիրէին. ան երկչոտ սկիւռ-
ներուն հետ իսկ կը բարեկամանար. կոյր, կաղ, անկարող մար-
դոց հետ բարեկամութիւն կը հաստատէր և իր բարի ու ազդե-
ցիկ խօսքերով զանոնք կը մխիթարէր։

Իրենց գիւղին մօտ, Բօճըր անունով հովիւ մը կը բնակէր և
հաւատարիմ շուն մը ունէր Քէք անուն. դրեթէ ոչխարները արա-
ծողը շունն էր. Բօճըրի արթուն եղած միջոցին գետնին վրայ տա-
րածուած կը հսկէր, իսկ երբ Բօճըր պառկած ըլլար, ասդին ան-
դին կը վազէր խելահար որ մի գուցէ ոչխարները ցրուին, կոր-
սուին ու ինք ամօթապարտ մնայ իր տիրոջ քով. այսպէս շուն մը
ըլլալով հանդերձ կը ճանչնար իր պարտականութիւնը ու զայն
անթերի կատարել կը ջանար։

Օր մը Ֆլօրէնս երբ բարեկամուհիի մը հետ ձի հեծնելով դուրս
ելած էր, տեսաւ Բօճըրը որ ոչխարները կ'արածէր. սակայն Քէք
հոն չէր և ոչխարները ասդին անդին ամէն ուղղութեամբ վազե-
լով կը չարչարէին խեղճ հովիւը։

Ֆլօրէնս և բարեկամուհին կեցան հարցնելու համար թէ ինչո՞ւ
շունը չկար, արդեօք բա՛ն մը պատահած էր։

—Ո՛հ, պատասխանեց հովիւը, Քէքը այլևս չպիտի ծառայէ
ինծի, որովհետեւ պիտի սատկի...։

—Պիտի սատկի՞, գոչեց Ֆլօրէնս, ո՛հ Բօճըր ի՞նչ չար էք այս-
պէս ըսելնուդ համար, խեղճ Քէքը ի՞նչ ըրած ունի ձեզի։

—Ան բան մը չըրաւ ինծի, պատասխանեց Բօճըր, բայց առջի
օր չար տղայ մը քար մը նետեց և սրունքներէն մէկը կտորեց.
խեղճ Քէք, մարդկային արարածի մը պէս էր, ինչ որ հրամայէի
ան կ'ընէր. ու հովիւը սկսաւ փոքրիկ տղու մը պէս լալ։

Կը տեսնէ՞ք տղաք ամենափոքր չարութիւն մը ի՞նչ աղէտներ
կը ծնի. մէկ փոքրիկ քարի կտոր մը նետելով ո՛րքան արցունքի
պատճառ կ'ըլլայ այդ չար տղան. արդեօք սիրտը ի՞նչպէս պիտի
ցաւի ու խիղճը ի՞նչպէս պիտի աանջէ զինքը. պիտի գղջայ ըրա-
ծին վրայ սակայն եղածը եղած է. ինչո՞ւ կ'ըսեն միշտ թէ գործե-
լէն առաջ մտածել պէտք է։

Ֆլորէնս և իր բարեկամուհին սաստիկ տխրած այս լուրէն հո-
վիւր հոն թողլով գացին դէպի հովիւին խրճիթը և խեղճ շունը
տեսնելու համար ներս մտան։ Երբ փոքրիկ աղջիկը «խեղճ Քէբ,
սիրուն Քէբ» ըսաւ, ան սկսաւ պոչը օրրել և սողալով սեղանին
տակէն անոնց ոտքերուն առջեւ տարածուեցաւ։ Ֆլորէնս բռնեց
բազուկներէն մէկը և անոր աղտոտ գլուխը շոյեց և սկսաւ խօսիլ.
հետը մինչ բարեկամուհին կը զննէր վնասուած սրունքը։

— Շատ գէշ ուռած է, դպչելով աւելի կը ցաւցնենք։

Բայց այդ պահուն շունը հառաչեց ցաւով և սկսաւ լիզել ա՛յն
ձեռքերը որ կը ցաւցնէին զինքը որովհետեւ հասկցաւ թէ իբր
բարի կը գործէին։

— Միայն գէշ ճմուռ մըն է, կոտրած ոսկոր չկայ ըսաւ Ֆլ-
լորէնսի բարեկամուհին, Քէբ ամենէն առաջ հանգստի կը կարօտի,
քիչ ատենէն պիտի աղէկնայ։

— Շատ չնորհակալ եմ, սակայն չե՞նք կրնար բան մը ընել քա-
նի որ այսքան սաստիկ ցաւերու մէջ է։

— Առատ տաք ջուր պէտք է լուալու համար սրունքը, թէ՛
ցաւը պիտի մեղմանայ և թէ՛ զայն բժշկելու պիտի ծառայէ։

Ֆլորէնս շուտ մը կրակ վառեց, քիչ մը տաք ջուր պատրաս-
տեց և սկսաւ շան սրունքը լուալ։ Շատ չանցաւ հետզհետէ նուազ
ցաւ զգաց և ջանաց իր չնորհակալութիւնները յայտնել պոչը օր-
րելով ու քաղցրանուշ նայուածքներ ուղղելով իր խնամակալու-
հիներուն։

Այսպէս շունը հանդարտեցնելով մեկնեցան։ Ծամբան հանդի-
պեցան խեղճ հովիւին որ գլուխը ծռած ու տխուր դէմքով մը
ծանր ծանր դէպի տուն կու գար։

— Ո՛հ Բօճըր, գոչեց Ֆլորէնս, դուք ձեր շունը խեղճ Քէբը
չպիտի կորսնցնէք. մենք հասկցանք որ բնաւ կոտրած չէ սրունքը։

— Շատ չնորհակալ եմ ասիկա լսելու համար, ըսաւ խեղճ
հովիւը. շատ չնորհակալութիւններ նաև ձեզի որ գացիք տեսնե-
լու զայն։

Ուրախութենէն հովիւին խելքը գլխէն թռաւ ու սկսաւ վա-
զել դէպի տուն՝ տեսնելու շունը։

Հետեւեալ առտու Ֆլորէնս կանուխ հոն եկած էր լուալու հա-
մար Քէբի սրունքը։ Այսպէս քանի մը օր և հետզհետէ աղէկ գը-
տաւ ու խեղճ շունը կրցաւ հսկել դարձեալ իր հօտին վրայ։



Ասիկա շատ տարիներ առաջ պատահեցաւ և այդ բարեսիրտ
փոքրիկ աղջիկը երբ մեծցաւ կիներուն ամենաքաջը և ամենաբա-

րին եղաւ, իր բոլոր երիտասարդութիւնը հիւանդ խնամել սորվելու համար վատնեց: Խրիմի պատերազմին ատեն մարզուած խումբի մը զլուխը անցած զնաց հսկելու համար Անգլիացի վիրաւորներուն որոնք յատուկ խնամքի ուշաւ հիւանդանոցներու կը կարօտէին: Ան տասը հազար մարդիկ ունեցաւ խնամքի կարօտ, և գրեթէ պառկելու իսկ ժամանակ չունէր ասիկա և միւսին ժամանակ իր ծանր գործը խիստ հիւանդացուցին զայն:

Ասկէ զատ չատ մը մեծ գործեր ալ ըրաւ. հիւանդանոցները տունի պէս բարեկարգեց, իր բոլոր կեանքը աղնուօրէն վատնեց հիւանդներ խնամելով և մասնաւորապէս անոնց որոնք աղքատ էին:

Մեր մէջէն կա՞ն արդեօք տղաք, Ֆլորէնսի հետեւող որ մարդկութեան օգտակար ու սպեղանին եղած է:

Իզմիր

Թարգմանեց՝ ՅՈՎ. Հ. Յ. ԱԶԱՏԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

ՈՒՍԵՅԻ սիրե՛լի փոքրիկ ընթերցողներ Մաղիկի, ահա՛ ձեռքը եկաւ, երկայն գիշերները ինչո՞վ կ'զբաղիք. միթէ զաւառացիներէն աւելի՞ բաղդաւոր էք ժամանցի տեսակէտով:

Թէեւ զաւառացիները երեկոյթներ, պարահանդէսներ, թատրոններ չունին, բայց անոնք ալ երբեմն բարեկամներու տուններ կ'այցելեն ու իրենց մասնայատուկ ժամանցի բաժինները ունին:

Գաւառացի բաղմանդամ ընտանիքը, թոնիրին բոլորտիքը շարուելով, անմեղ ու զուարթ կալաճիներու (խօսակցութիւն) ծրարները մէկիկ մէկիկ կը քակէ: Ձեզ պէս պճիկներն ալ՝ իրենց մամիկներէն լսած սրտայոյզ հէքեաթները կը պատմեն և ներկայ եղող պճիկի հիւրերը հանդարտութեամբ ու ախորժակով կ'ունկընդրեն այդ հետաքրքրական պատմութիւնները: Նաև իրարու մասնակական հանելուկներ կը հարցնեն: Ի՞նչ մը ատեն խորհելէ ետք՝ երբ չկրնան լուծել այսինչ հանելուկին ի՞նչ ըլլալը, այն ատեն՝ այդ դժուար հանելուկը հարցնողին ծառ մը (եկեղեցի) կամ սուրբ մը կը խոստանան: Երբեմն այսինչ ժամը կամ այնինչ սուրբը չուզեր և վերջապէս իրւր նազանքով կ'ընդունի, ու հանելուկին պատասխանը կ'ըսէ:

Ահա, այդ հանելուկներէն մաս մը, ինչ որ կարծեմ թէ ձեզ ալ հաճոյք պիտի պատճառէ:

* * *

Ագին փայտէ, պոչը մազէ,
Գընտըլ, գընտըլ միշտ կը վազէ. — Տանիքի շողհարը:
Ագի ունի, հոգի չունի: — Տապակ:
Ալաճա պոճիկ, մահլէտէ կէզէր. — Լապսեր:
Ա՛լ ա՛լ իրէկ, մա՛վի լա՛լակ, տէսթէ չիւչէկ. — Արեւ:
Անբուսը անծնին հեծցուցին,
Անգաղարին երդօքն անցուցին. — Աղ եւ ջորի, գետ եւ կամուրջ:
Անծուկ, ծըլատուկ. — Թուզ:
Անուոր դերձան, անծակ մարգրիտ,
Աստուած չարեց, մարդը քաղեց. — Խաղող:
Առտունէ մինչեւ իրկուն կը պտտի,
Իրիկուն կ'ըլլայ, բերանը բաց կը մնայ. — Ոսնաման:
Բան մը կայ բան չէ,
Ամառ ձմեռ կանանչ է: — Հինայ:
Բան մը կայ որ, ես կը տեսնամ, դուն կը տեսնաս,
Միայն Աստուած չի տեսնար. — Երագ:
Երկայն բարտի՛ չուք չունի. — Դետ:
Է՛լ մը կու գա՛յ դռալով,
Պտուղ կու տայ դողալով. — Զաղացի:
Թոնիր մ'ունիմ չորս հաց կ'առնէ. — Ընկոյզ:
Ինքը քար ու երկաթէ՛,
Անգաղար խմոր կ'ուտէ. — Փուռ:
Մէջտեղը նուշ, բոլորը փուշ. — Այֆ:
Ուզտը ախոռ մտաւ, պոչը դուրս մնաց. — Շերեփ:
Լեռան ետեւ պուռմա մը խոտ. — Ծիրանի գոտի:
Խա՛թ, խաթի տո՛ւր, խաթ խաթի՛
Օ՛ տէ Ալլահըն հիքմէթի. — Կաղամբ:
Կապուտի՛կ, կապուտիկ, անուշտ տամ չի հանես. —
Կապ ու սիկ:
Կ'երթայ կուգայ մատնոցի չափ տեղ կ'առնէ. — Կաւազան:
Կէս քուլունճա պատին վրայ. — Լուսին:
Կծիկ մ'ունիմ, կծկեմ, կծկեմ չհատնիր. — Զուր եւ ճամբայ:
Կուրտի, կուրտի՛, իրկուն կ'ըլլայ կուգայ մաղ մը տեղ
կ'առնէ. — Շուկ

Կով մը ունիմ տամա՛ տամա
Իր ծըծերը խամա՛ խամա՛,
Տարին հեղ մը տունը կուգայ. — Այգեկութի խաղող:
Մենք բան մ'ունինք կեցած, եկողին ձեռքը կը պազնէ. —
Դրան ջախջախ:



ԾԱՂԻԿԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ կը կռուրտիք, Սիրո՛ւն և Խորէն,
 Ձեր սիրտին խորէն,
 Կ'արժէ՞ որ արդեօք ծաղիկի համար
 Օ՛հ, անգլժարար,
 Ձերար հրմշտէք, ծաղրէք ու վերջէն
 Ծառերուն մէջէն,
 Սիրտերնիդ կոտրած դէպի տուն դառնաք
 Խիստ նարգ արագ:
 Գոնէ մեր սիրուն «Ծաղիկ»ը ըլլար
 Թարմ, մշտադալար,
 Զոր չըկրնայիք մէջերնիդ այսպէս
 Բաժնեւ եղբօր պէս:

Կեանքի մէջ ա՛յնքան հոգեր կան տղա՛ք,

—Անանկ մի՛ խնդար.—

Որ չարժեր երբեք կռուիլ չարաբար

Ծաղիկի համար:

Մտիկ չես ըներ խօսքիս քաղցրօրէն,

Անառա՛կ խորէն,

Զգէ՛ Սիրունը որ երթայ խաղայ.—

Տղայ էք, տղա՛յ . . . :

Մ. Պ.

ՀՕՐ ՄԸ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

(ԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ՀԱՐՈՒՍՏ վաճառական մը կ'ուզէր այնպիսի տեղ մը պահել իր ինչքերը որ մէկը չկրնայ զայն գողնալ:

Հետեւաբար կանչեց քարակոփ մը և անոր յանձնարարեց շինել իրեն քառանկիւն շէնք մը ա՛յնչափ հաստատուն որ կարելի չըլլայ զայն ծակել կամ խորտակել:

Քարակոփը շինեց պահանջուածին պէս հաստատ շէնք մը և վաճառականը հոն փոխադրեց իր ամբողջ գանձը:

Զմոռնանք սակայն ըսելու թէ՝ քարակոփը շինած շէնքին պատերէն մէկուն վրայ, մէկ երկու մարդ մտնելու չափ ծակի մը քարը այնպէս մը տեղաւորեցուցած էր, որ կրնար տեղէն ելլել ու դուրսիլ առանց յայտնի ըլլալու:

Քանի մը չաբաթ անցաւ, քարակոփը հիւանդացաւ և հե. տեղհետէ իր վիճակը ծանրացաւ: Երբ հասկցաւ որ մահուան ժամը կը մօտենայ, կանչեց քովը իր երկու զաւակները և անոնց ըսաւ:

— Տղաքներս, դեռ երկու երեք ժամ հիւր եմ ձեր քով. ձե. զի հարստութիւն մը չունիմ բաժնելիք, բայց բան մը պիտի պատ. ուիրեմ զոր եթէ զաղտնապահութեամբ գործադրէք երջանիկ կրնաք ըլլալ:

Երկու տղաքները ուշադրութեամբ կ'ունկնդրէին իրենց մահա. մերձ հօր որ սապէս չարունակեց.

— Մեռնելէս ետք, օր մը գիշերանց գացէք սա մեր քաղաքին ամէնէն հարուստ վաճառականին քարայէն տունը՝ այն զոր ես չինեցի։ Անոր ետեւի կողմը գտնուած քառակուսի քարը կըրնայ տեղէն ելլել։ Ղայն հանեցէք կամաց մը և ներս մտնելով ձեզի պէտք եղած դրամը առնելով նորէն դուրս ելէք և տեղը դրէք քարը։

Հազիւ այս բառերը լսնցուց, վիճակը կարծես ա'լ աւելի սաստկանալով սոսկալի տանջանքներու մէջ հոգին աւանդեց։

Տղաքը իրենց հօր այս անակնկալ հարստութիւնը երազելով, գիշեր մը ելան և հարուստին գանձարանը երթալով իրենց հօր ըսած քարը ղիւրուկեամբ հանեցին և շատ մը դրամ առնելէ յետոյ ելան և քարը տեղը զետեղելով մեկնեցան։

Այսպէս շարունակեցին շատ անգամներ։ Բայց ո՞ր գողութիւնը երեւան չեցին և ո՞ր չարագործը չի պատժուիր։

Դրամատէրը երբ օր մը եկաւ այցելել իր գանձը, ապշութեամբ տեսաւ որ կէսէն աւելին անհետացած էր։ Ի զուր քննութիւններ կատարեց, որովհետեւ գողութեան բնաւ հետք չկար, նոյնիսկ դրան կնիքն անգամ չէր աւրուած։ Վաճառականը խորամանկ մարդ, գործը երբեք չի հրապարակեց։ Դրամի մնուկներուն շուրջը, զօրաւոր թակարդներ լարեց գաղտնաբար, և դուռը կղպելով գնաց։

Անգին սակայն երկու եղբայր-գողերը իրենց գողցած դրամը սպառելով, նորէն գիշեր մը իրենց վարժուած տեղը երթալով քարը տեղէն հանեցին։ Մեծ եղբայրը ներս մտաւ և թակարդը չտեսնելով վրան կոխեց ու անանկ մը բռնուեցաւ որ տեղէն չէր կրնար շարժիլ։ Պղտիկ եղբայրը վրայ հասաւ և իր եղբօր ինչ ըլլալը հասկնալու համար երբ սնտուկին մօտեցաւ, յանկարծակիի եկաւ երբ ինքն ալ ուրիշ թակարդի մը զսպանակին վրան կոխելով կէս մէջքէն երկաթէ հաստ ակռաներու մէջ մնաց։

Հիմա տեսարանը փոխուած էր, երկու եղբայր դէմ դիմաց երկաթէ թակարդներու սուր ակռաներուն մէջ կը տառապէին և հազար ճիգեր կ'ընէին ազատելու համար, բայց ի զուր։ զսպանակները անգթօրէն կը սեղմէին զանոնք, ա'յնչափ սեղմեցին որ գողերուն շունչը կտրուելով չարաչար մեռան։

Հետեւեալ օրը վաճառականը գալով, մեռած գտաւ այդ գողերը որոնք իր հարստութիւնը կը տանէին և անմիջապէս կռահեց քարակոփին խարդախութիւնը որուն զոհ գացած էին անոր երկու զաւակները, որոնք այսպէս իրենց արդար պատիժը գտած էին։

Թարգմանեց

Ա.ՌԱԲԵՆԼ Դ. ԿՈՍՏԱՆԵԱՆ



ՀԻՆ ԿՐԾԿԱԼԻ ՄԸ

(ՅՈՒՇԵՐ)

Քեզմո՛վ էր որ առջի անգամ իմ նոր սուգս կրեցի
Սեւ կուրծքիդ տակ խոցոտելով տրտում սիրտըս կանացի •
Գունատ տեսքդ հիմակ սակայն սրբուած սեւ սուգերէն,
Միտքս բերէ անուշ յուշեր իմ դպրոցիս օրերէն :

Դեռ մեղանի բիծեր հարկաւ կրնամ գտնել քու վրադ ,
Որոնք ինծի յուշարարներ են — քեզի՛ մէջմէկ արատ •
Անոնք ինծի յուշարարներն են դպրոցի օրերուս ,
Որ տարինե՛ր են սլացած , ա՛լ դառնալնուն չունիմ յոյս :

Այնքան սիրած դասարանիս պատերուն կը քսուէիր ,
Ամէն անգամ որ դասատուս ինծի կ'ըսէր «դո՛ւն ելի՛ր»
Գրասեղանիս հին փայտերուն միշտ կառչելով , օր մըն ալ ,
Խոշոր գամ մը կրցաւ վրադ խիստ պզտիկ ծակ մը բանալ :

Ծրարիս մէջ՝ ուր խառն ի խոռոն օձիք , պլուզ ու ժանեակ ,
Ժապաւէններ՝ հինէն նորէն եկած ինկած տակէ տակ ,
Իրենց չըքեղ ատեններուն անցած փառքը կը խոկան՝
Քու գունատած յոգնած մարմինդ պիտի գտնէ իր դամբան :

Ո՛վ կիսամաշ սեւուկ կրծկալ , հաւատարի՛մ յուշաբեր ,
Եթէ օր մը օտար ձեռքեր բոլորովին անտարբեր
Կտորներու վերածելով քեզ դամբանէդ հանն հուրս ,
Պիտի յիշե՛ս պարագաներն անցած գացած օրերուս :

4 փետր. 1904,

ՀԵՐԱՆՈՅԵ ԱՐՇԱԿԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍ

Սինկեր ընկերութեան արուեստագիտական ճրդ ցուցահանդէսը
բացուած է Բերա , Մեծ-փողոց , 343 թիւ իր մասնաւոր շէնքին
Ա. յարկը : Մուտքը ամէն օր բաց է և ձրի : Կէս օրէն վերջերը
կիններուն համար : Մեծ մրցանակներ ստացած է 1900ի Բարիզի ,
1904ի Սէն-Լուիի , 1906ի Միլանի և 1906ի Պրուսայի ցուցահան-
դէսներէն :

ԾՈՅԼ ՏՂԱՆ

Ծուլութենէն աւելի անշահ թերութիւն չեմ ճանչնար: Աշխարհ եկած ենք ամէնքնիս ալ աշխատելու համար: Եւ երբ բան մը չենք ըներ, յանձաւոր ենք:

Ահա Օգոսէնը, ծոյլ մը, որ միշտ կը պատ-
ժուի: Տունին մէջ բան մը չըներ, դպրոցին
մէջ ալ փոխանակ դաս պատրաստելու, ճանձ
կ'որսայ:

Վաղը միւս օր երբ դպրոցէն ելլէ, գործ
մը չպիտի կրնայ դռնել: Ի՞նչ պիտի ընէ, կամ
պիտի մուրայ և կամ գողութիւն պիտի ընէ:

Տղանք, զգուշացէք ծոյլ ըլլալէ:

ԾՈՅԼ ԶԵՂՈՂ ՏՂԱՆ

Ի՞նչ տարբերութիւն Օգոսէնի և Բարսե-
ղի միջեւ: Մինչ մէկը բան մը ընել չուզեր,
միւսը միշտ օգտակար զբաղում մը կը փն-
տուէ:

Աւտուն կանուխ կ'ելլէ և մօրը կ'օգնէ
տան գործերուն մէջ: Երբեմն տունը կ'աւլէ,
այծը դաշտ կը տանի կամ խոտ կը քաղէ:
Դպրոցին մէջ ճանձերով չգբաղիր: Միշտ կ'ա-
ռաջդիմէ, աղէկ կարգաւ գրել դիտէ: Ուսու-
ցիչը զայն կը սիրէ, և միշտ մրցանակ կուտայ:

Գործի մէջ ալ յաջող պիտի ըլլայ Բարսեղ:
Տղաքս նմանեցէք այս աշխատասէր տղուն:



ՊԶՏԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

« Կ. Ս. Ն. Թ. Է. Բ. Ն. Ա. »

Յունաց Ծնունդը եկաւ, վաղը միւս օր կաղանդ ու տօնական օրեր, փողոցները կը լեցուին շանթերնայի աղմուկներով: Այս նուագարանը շալկած է մէկը և ուրիշ մը դարձնելով անոր պտուտակը, անդադար կը նուագէ: Խմաններուն և Բարեկենդանին ալ զիմակաւորներուն մեծ հաճոյքն է անս Զայն նուագողները, այսինքն շանթերնաները իրենց յատուկ տարազը ունին. սե ու նեղ գագաթով ֆէս, լայն տարատ մը որուն վարի ծայրը ետեւի կողմը վեր ծալուած է. կրուկը բարձր կիսակօշիկներ, ետեւը կոխուած. լայն բուրդէ գօտի մը մէջքին վրայ:

Հանթերնան գլան ունեցող դաշնակ մըն է: Իր մէջը գլան մը կայ, վրան երկաթ գամերով: Երբ գլանը դառնայ գամերը կը զային թելերուն և այսպէս առաջ կու գայ եղանակը:

Հանթերնան աւելի պարի եղանակներու համար լաւ է: Ինք հաճելի է երբ քիչ նուագուի. սակայն երբ աւելի տեւէ իր աղմուկը, ձանձրացուցիչ կը դառնայ:

Պոլսոյ մէջ առաջին շանթերնան շինուած է 1871ին: Իր հնարին է խտալացի մը Ճիւղէրբէ Թուրքօնի անուն, որ Ճէնովայի մէջ ծնած էր և որդին էր դաշնակ շինողի մը:

Գրեթէ զուտ տեղական նուագ մըն է այս: Իր հնարուելէն ետք տակաւ աւելցաւ իր սպառումը և ընդհանրացաւ գործածութիւնը: Մինչեւ հիմա 300 հոտէն աւելի շինուած են: Մէկ հատը կ'արժէ 18էն մինչեւ 22 ոսկի:

Ժամանակին ուրիշ տեսակ երգեհոն մըն ալ կար Պոլսոյ մէջ: Ասիկա կը կոչուի «բարբարոսութեան երգեհոն» (orgue de barbarie), որմէ կան նաեւ Եւրոպայի գրեթէ ամէն կողմերը: Ասիկա քառակուսի սնտուկ մըն է, զոր խեղճ մարդուկ մը ուսէն կը կախէ կաշիէ կապով մը և երբ նուագել ուզէ, զայն կը դնէ դետին ու կը շարժէ սլաուտակը, յորս հանելով միօրինակ և աղճատ եղանակ մը: Քանի մը փարա կու տան, և մարդը առնելով իր գործիքը կը հեռանայ: Հիմա Պոլսոյ մէջ միայն մէկ հատ կայ այս հնօրեայ նուագարանէն:

ՊԱՐՈՒՆ էր: Պայծառ արեւը կ'ոգեւորէր ամբողջ բնութիւնը նոր կորով մը տալով անոր: Արեւոր ծերունի մը 90 տարեկանի մօտ, այս պայծառ օդէն օգտուելով կ'իջնէ պարտէզ ծառ մը տնկելու նպատակով: Մէկ քանի երիտասարդներ որոնք նրատած զինքը կը դիտէին զարմացած կ'ըսէին. «Յիմար է, աս մարդը, եթէ տուն մը չիւնելու ըլլար, կրնար զայն վայելել մէկ քանի ամիսէն, բայց ծառ մը տնկել...»:

Վերջապէս չի կրնալով համբերել խօսքը ծերունիին ուղղելով կը հարցնեն.

— Ըսէ՛, խնդրենք, ազնիւ ծերունի, ինչո՞ւ արդեօք կը յոգնիս, կը տքնիս այնպիսի բանի մը համար որուն արդիւնքը հեռուոր ապագայի մը մէջ պիտի կրնաս վայելել և այդ ժամանակին հասնելու համար մարդ պէտք է Մաթուսաղայի չափ ապրի: Այդ տեսակ խորհուրդներ և յոյսեր իրագործել երիտասարդներուն կ'իյնայ:

— Բարի տղաքս, կը պատասխանէ ծերուկը, եթէ ինծի չվայելեր այդ տեսակ խորհուրդներով և յոյսերով զբաղիլ, ձեզի ալ չպիտի վայելէ, որովհետեւ Աստուծոյ ձեռքը անտարբերութեամբ կը գործածէ իմ և ձեր կեանքին թելերը: Իմաստուն մարդը միթէ գէ՛շ բան մը ըրած կ'ըլլայ երբ ուրիշներուն համար կ'աշխատի. իմ ներկայ ծառիս հովանին իմ թոռներս պիտի վայելեն անշուշտ: Թերևս, ազնիւ զաւակներս, իմ ապրելի ժամանակս աւելի երկարատեւ ըլլայ ձեր ապրելիք ժամանակէն: Այսօր, վաղը և շատ մը օրեր թերեւս տակաւին ապրիմ և աւա՛ղ, գուցէ տեսնեմ արեւին ծագիլը ձեր գերեզմաններուն վրայ...:

Ծերունիին այս տխուր խորհրդածութիւնները կը հաստատունին քանի մը օր ետք տեղի ունեցած դէպքերով: Երիտասարդներէն մէկը Ամերիկա մեկնելու ատեն ծովը իյնալով կը խեղդուի. երկրորդը մեծ պատիւներու բաղձալով նաւապետ կ'ըլլայ և փոթորիկի մը պահուն կը մեռնի իր կեանքի գեղածիծաղ գարունին մէջ. իսկ երրորդը ծառի մը ճիւղերը կտրելու ատեն կ'իյնայ ու կը մեռնի: Ծերունին կ'ողբայ ասոնց վաղահաս մահուան վրայ և որպէսզի բնաւ չմոռցուի այս դասը քանդակել կուտայ վերոյիշեալ պատմութիւնը անոնց գերեզմաններուն վրայ:

Թարգմանեց՝ ՆԻԿՈԼՆԻ ԿԻՐՈՅԵԱՆ
Աշակերտուհի Նիկողոսեան Վարժարանի

(Այս պատմութիւնը քարգմանած ու մեզի դրկած էր նաեւ Պարսիզակէն Պ. Գրիգոր Պ. Ժամկոչեան, որուն քարգմանութիւնը այլեւս աւելորդ կը համարինք հրատարակել:)

“ԾԱՂԻԿ”Ի ԱՌԱՋԻԿԱՅ ԹԻԻԸ

ԵՒ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Ծաղիկի առաջիկայ թիւը կաղանդի առթիւ կրկին ծառայող պիտի հրատարակուի և բաղմաթիւ պատկերներով: Հրապարակի վրայ ծանօթ գրագէտներ և գրագիտուհիներ Ծաղիկի պղտիկ ընթերցողներուն համար յատկապէս գրած են կաղանդի պատմութիւններ և ոտանաւորներ: Անակնկալը հաճելի ընելու համար այժմէն բան մը չենք ըսեր իր բովանդակութեան մասին: Միայն թէ խիստ հաճելի կաղանդչէք մը պիտի ըլլայ ան բոլոր տղոց և պատանիներուն համար: Պիտի սկսինք նաև խիստ գեղեցիկ թերթ մը:

Կաղանդի առթիւ հանելուկներուն ալ ճոխութիւն մը պիտի տանք: Կաղանդի թիւին մէջ դրուած հանելուկները լուծողներէն ճաշը հոգի մրցանակ պիտի շահին: Զորս հոգին պիտի ստանան Երկրագործական Պանքայի վիճակահանութենէն մէյմէկ տոմս որ, եթէ բաղդը ժպտի, կրնայ ստացողներուն բերել գեղեցիկ գումարներ: Իսկ միւս վեց հոգին պիտի ստանան մէյմէկ նոր հրատարակուած գիրք:

Ծաղիկի այս մանկական կաղանդի թիւը հրապարակ կ'ելլէ առաջիկայ երկուշաբթի օր և կը ծախուի 40 փարայի:

Մ Տ Ք Ի Զ Ր Օ Ս Ա Ն Ք

Մ Ե Ր Ա Ն Յ Ա Մ Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ը

Մեր կաղանդի թիւին պատրաստութեան համար այս չաբթու սովորականէն կանուխ հանած ըլլալով Ծաղիկը, անցած թիւին հանելուկներուն պատասխանները պիտի հրատարակենք յաջորդ թիւով: Իսկ այս թիւին հանելուկներուն պատասխանն ալ պիտի հրատարակենք Ծնունդի թիւին մէջ:

Հանելուկ թիւ 33.

Գտէք յատուկ անուն մը որ աջէն ձախ ինչ որ կարդացուի նոյնը կարդացուի նաև ձախէն աջ:

Հաշուական հարցում թիւ 33

- Կէտերուն տեղ դնել 1էն մինչեւ 15 թուան շահները այնպէս որ կաղմուած եռանկիւնին իւրաքանչիւր կողմին վեց թուանշաններուն գումարը իրարու հաւասար ըլլայ:

Լուծողներէն Զին մէյմէկ Ժողովրդական Տարեցոյց:

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԿԱՂԱՆԴՉԷՔԸ

Ո՛րչափ տաղտկալի գործ է, սա՛ պզտիկներուն Կաղանդչէքի ընտրութիւնը: Երբեմն ա՛յնչափ քմահաճ ու բծախնդիր են պզտիկները, որ ամէնէն փորձառու մարդն իսկ յաճախ կը վարանի, տեսակ մը մտահոգութիւն կ'ունենայ: «Պիտի հաւնի՞, գոհ պիտի մընա՞յ» — ընտանիքի հայրերուն միտքը յոգնեցնող հարցեր են ասոնք:

Այս նկատողութիւնները աչքի առջև ունենալով, Պ. ՊԱՆԵՆՅ ԳՐԱՏՈՒՆԸ Ամանորի յատուկ նուէրներու բազմազան և ճոխ մըթերք մը դրած է իր յաճախորդներուն տրամադրութեան տակ: Մասնաւորապէս կը գտնուին հրահանգիչ պատմութեանց դրքեր, զարդարուն օրացոյցներ, պատկերազարդ քարդեր, յուշատետրներ, և այլազան շարք մը մանկական հատորներու:

ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

որ Պոլսոյ վաղեմի գրական հաստատութիւններէն է, ունի ամէն տեսակ հին և նոր գրքերու ճոխ մթերք մը ամէն ընթերցասէրի և ամէն դպրոցականի համար: Կաղանդի առթիւ ունի նաև նուէրացու ամէն տեսակ գիրքեր, օրացոյցներ, տարեցոյցներ, դիւրամատչելի պայմաններով և հաճելի տեսակներով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Այս տարի ալ հրատարակուեցաւ այս Տարեցոյցը որ ամէն տարիքի ու հասակի յարմար գրական, ընտանեկան, գործնական և գիտական նիւթերով լեցուն է և ունի նաև փայլուն պարգեւներով մրցումներ: Ծնունդի օրերը հաճելի անցնելու համար յանձնարարելի գիրք մըն է: Գինն է 3 զրուշ միայն:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌՅԻԻ

անգամ մը Չաքմաքճըլար, Գըլըճճեան գրատունը այցելելը կ'արժէ, երբ հաճելի նուէրներ, այլադան քառթեր և օրացոյցներ գնել կ'ուզէ մարդ:

ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐ ՄԸՆ Է

նոր հրապարակ ելած գեղեցիկ տպագրութիւնով ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ որ ասկէ առաջ իր նմանը չունէր: Այս Հայերէն Երկրագունճը կը ծախուի շրջանակով 35 զրուշ, իսկ առանց շրջանակի 65 զրուշի: Գաւառներու համար 15 զրուշ աւելի իբր փոխադրութեան ծախք: Դիմել, Պապը Ալի Ճատտէսի թիւ 56 Յովհ. էֆ. Ալշաւորի «Օսմանլը» գրատունը:

Հրոճում թիւ 33 հանելուկիս և հարցումիս.